ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

25.05.2021թ.
ժամը 10^{45}

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է 20-ը մայիսի 2021թ. ժամը 11^{00}-ին ՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո շարունակեց աշխատանքները:

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության ԶԲՖԿԾ պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲ բաժնի գլխավոր մասնագետ Վ. Մելքոնյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ.Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ.Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«ՔՆԱՐ ՇԻՆ» ՍՊԸ
2	«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ
3	Գոռ Շեկոյան ԱՁ
4	«ԼԵՎԱՆ» ՍՊԸ
5	«Տ-Ինդասթրի» ՓԲԸ
6	«Լուսի-Արեգ» ՍՊԸ
7	«Ա Գ շին» ՍՊԸ
8	«Ֆոտոն» ՍՊԸ
9	«ՄՈՍԵ-ԱՐԱՄ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալները բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Լ. Թազայան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ **«ԼԵՎԱՆ» ՍՊԸ-ի, «ՄՈՍԵ-ԱՐԱՄ» ՍՊԸ-ի և Գոռ Շեկոյան ԱՁ-ի** հայտերով ներկայացված հետևյալ փաստաթղթերի.

«ԼԵՎԱՆ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված՝ գնանշման հարցմանը մասնակցելու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1) «տեխնիկական բնութագիրը» դաշտի 1-ին չափաբաժնում բացակայում է «Մոտավոր տեսքը և մնացած չափերը համաձայն էսքիզի» հատվածը:

ՄՈՍԵ-ԱՐԱՄ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված՝ գնանշման հարցմանը մասնակցելու փաստաթղթերը (Հավելված N 1, Հավելված N 1.1, Հավելված N 2) հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Գոռ Շեկոյան ԱՁ-ի հայտով ներկայացված՝ գնանշման հարցմանը մասնակցելու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1) «տեխնիկական բնութագիրը» դաշտի 1-ին չափաբաժնում բացակայում է «Մոտավոր տեսքը և մնացած չափերը համաձայն էսքիզի» հատվածը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ **25.05.2021**թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4 **27.05.2021**թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ **«ԼԵՎԱՆ» ՍՊԸ-ն, «ՄՈՍԵ-ԱՐԱՄ» ՍՊԸ-ն և Գոռ Շեկոյան ԱՁ-ն** սահմանված ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Թազայան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Չ/Հ	Գնան առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	Նախահաշվային գին (ՀՀ դրամ)	Մասնակիցներ	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	աթոռակներ (Աթոռակ զինվորական մետաղյա. կարկասով)	հատ	6000	36,000,000	«ՔՆԱՐ ՇԻՆ» ՍՊԸ	19,200,000	3,840,000	23,040,000
					«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ	30,000,000	6,000,000	36,000,000
					Գոռ Շեկոյան ԱՁ	35,000,000		35,000,000
					«ԼԵՎԱՆ» ՍՊԸ	36,000,000	7,200,000	43,200,000
					«Տ-Ինդասթրի» ՓԲԸ	40,000,000	8,000,000	48,000,000
					«Լուսի-Արեգ» ՍՊԸ	48,000,000	9,600,000	57,600,000
					«Ա Գ շին» ՍՊԸ	50,400,000		50,400,000
					«Ֆոտոն» ՍՊԸ	110,000,000	22,000,000	132,000,000
2	ննջասենյակի կահույք (Կողապահարան զինվորական 1 հարկանի)	հատ	2700	67,500,000	«Ա Գ շին» ՍՊԸ	48,600,000		48,600,000
					«Ֆոտոն» ՍՊԸ	56,250,000	11,250,000	67,500,000
					«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ	67,500,000	13,500,000	81,000,000
					«ՄՈՍԵ-ԱՐԱՄ» ՍՊԸ	72,500,000		72,500,000
					«Տ-Ինդասթրի» ՓԲԸ	85,500,000	17,100,000	102,600,000
3	ննջասենյակի կահույք (Կողապահարան զինվորական 2 հարկանի)	հատ	1500	52,500,000	«Ա Գ շին» ՍՊԸ	48,000,000		48,000,000
					«Ֆոտոն» ՍՊԸ	56,250,000	11,250,000	67,500,000
					«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ	60,000,000	12,000,000	72,000,000
					«Տ-Ինդասթրի» ՓԲԸ	68,750,000	13,750,000	82,500,000
					«ՄՈՍԵ-ԱՐԱՄ» ՍՊԸ	75,000,000		75,000,000

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Քանի որ «Աթոռակների և ննջասենյակի կահույքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և սույն ընթացակարգի հրավերի 1-ին բաժնի 8.6 և 8.7 կետերի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը **27.05.2021թ.**-ին որոշեց կասեցնել հայտերի բացման և գնահատման նիստը և **02.06.2021թ.** ժամը **11:30**-ին ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) սույն ընթացակարգին հայտ ներկայացրած և հրավերի պահանջներին բավարար գնահատված բոլոր մասնակիցների հետ առաջարկված գների նվազեցման նպատակով վարել միաժամանակյա բանակցություններ: Նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը վերոնշյալ մասնակիցներին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

3.4 **02.06.2021թ., ժամը 11:30-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում կազմակերպված բանակցություններին մասնակցելու համար ծանուցված մասնակիցներից ներկայացել են **«Ֆոտոն» ՍՊ, «Ա Գ շին» ՍՊ, «Օլանդա» ՍՊ** և **Տ-Ինդասթրի» ՓԲ ընկերությունների** ներկայացուցիչները:

3.5 Բանակցությունների արդյունքում ներկայացվեցին հետևյալ նոր նվազեցված գնային առաջարկները.

Չ/Հ	Գնան առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	Նախահաշվային գին (ՀՀ դրամ)	Մասնակիցներ	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
2	Ննջասենյակի կահույք (Կողապահարան զինվորական 1 հարկանի)	հատ	2700	67,500,000	«Ա Գ շին» ՍՊԸ	47,250,000		47,250,000
					«Ֆոտոն» ՍՊԸ	46,980,000	9,396,000	56,376,000
3	Ննջասենյակի կահույք (Կողապահարան զինվորական 2 հարկանի)	հատ	1500	52,500,000	«Ա Գ շին» ՍՊԸ	45,900,000		45,900,000
					«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ	43,750,000	8,750,000	52,500,000

Մասնակիցների կողմից ներկայացված և վերը նշված աղյուսակում չներառված գնային առաջարկները մնացին անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Լ. Թազայան)

4.1 **09.06.2021թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակիցներ հայտարարել՝

1) **«ՔՆԱՐ ՇԻՆ» ՍՊԸ**-ին՝ 1-ին չափաբաժնի մասով,

2) **«Ֆոտոն» ՍՊԸ**-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով,

3) **«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ**-ին՝ 3-րդ չափաբաժնի մասով:

Բավարար գնահատված մյուս մասնակիցները ճանաչվեցին հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ համապատասխան չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկների շահավետության:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Թազայան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Լ. Թազայան)

6.1 **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/17»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Մոտադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Վ. Մելքոնյան
Գնումները համակարգող	Լ. Թազայան